«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2023թ. մայիսի 30-ից (հիմնադրման ամսաթիվ) մինչ 2023թ.
դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի
վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գործադիր տնօրեն՝	Անահիտ Շաքարյան

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ինվիա Ինվեսթմենթս» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2023թ. մայիսի 30-ից (հիմնադրման ամսաթիվ) մինչ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մայիսի 30-ից (հիմնադրման ամսաթիվ) մինչ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության հենքադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Դավիթ Եղիգարյան
Աուդիտի ղեկավար

30 հոկտեմբերի 2024թ.
Երևան

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2023թ. մայիսի 30-ից (հիմնադրման ամսաթիվ) մինչ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի վերաբերյալ

	Ծնթ.	2023 հազար դրամ
Տոկոսային եկամուտ	5	9,066
Տոկոսային ծախս	5	(4,938)
Զուտ տոկոսային եկամուտ		**4,128**
Զուտ ստացված միջնորդավճարներ		41,785
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		12,611
Զուտ օգուտ արտարժույթի վաճառքից և փոխարժեքային տարբերությունից	6	14,806
Զուտ այլ գործառնական վնաս		(6,622)
Գործառնական շահույթ		**66,708**
Անձնակազմի գծով ծախսեր		(39,649)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(38,494)
Վնաս մինչ հարկումը		**(11,435)**
Շահութահարկի գծով փոխհատուցում	8	2,040
Տարվա վնաս		**(9,395)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(9,395)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 30-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Անահիտ Շաքարյան
Գործադիր տնօրեն

Հաշվապահական հաշվառման
ծառայություններ մատուցող ընկերության
ներկայացուցիչ
Սիրանուշ Խլղաթյան

	Ծնթ.	2023 հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ	9	38,230
Ֆինանսական հաստատություններից, կազմակերպություններից և անհատներից ստացվելիք գումարներ		14,242
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Վաճառքի և հետգնման դիմաց գրավադրված	10	324,668
- Ընկերության կողմից պահվող	10	245,744
Հետձգված հարկային ակտիվներ		2,040
Հիմնական միջոցներ	11	4,086
Այլ ակտիվներ		6,235
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**635,245**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	12	282,817
Պարտավորություններ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		3,709
Այլ պարտավորություններ		7,114
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**293,640**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	13	351,000
Կուտակված վնաս		(9,395)
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**341,605**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**635,245**

	Ծնթ.	2023 հազար դրամ
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ		3,695
Վճարված տոկոսներ		(4,010)
Ստացված կոմիսիոն գումարներ		67,984
Վճարված կոմիսիոն գումարներ		(41,902)
Ստացված այլ եկամուտներ		22,762
Վճարված այլ ծախսեր		(8,962)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(28,486)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր		(157)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		(553,095)
Այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում)		(10,495)
Այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		(22,258)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**(574,924)**
Շահութահարկ		-
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(6,510)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**(6,510)**
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված փոխառությունների ավելացում		268,428
Թողարկված բաժնետոմսեր		351,000
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**619,428**
Ընդամենը դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսքեր		**37,994**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ		-
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով		236
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ		**38,230**

Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2023թ. մայիսի 30-ից (հիմնադրման ամսաթիվ) մինչ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Չբաշխված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
30 մայիսի 2023 (հիմնադրման ամսաթիվ)	-	-	-
Կանոնադրական կապիտալի ավելացում	351,000	-	351,000
Հաշվետու ժամանակահատվածի վնաս	-	(9,395)	(9,395)
31 դեկտեմբերի 2023	**351,000**	**(9,395)**	**341,605**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ 11
2. Պատրաստման հիմունքներ 11
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 12
4. Ֆինանսական գործիքներ 13
5. Զուտ տոկոսային եկամուտ 22
6. Արտարժույթի վաճառքից զուտ օգուտ 23
7. Այլ ընդհանուր վարչական ծախսեր 23
8. Շահութահարկի գծով ծախսեր 23
9. Դրամական միջոցներ 24
10. Ներդրումային արժեթղթեր 24
11. Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ 25
12. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ 25
13. Պայմանական դեպքեր 26
14. Գործարքներ կապակցված կողմերի հետ 27
15. Իրական արժեքի չափման բացահայտումներ 27
16. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը 27
17. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 41

1. Ընդհանուր տեղեկություններ

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2023թ. մայիսի 30-ին Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը ստացել է Ներդրումային ծառայությունների լիցենզիա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից 2023թ. մայիսի 30-ին: Ընկերության հիմնական գործունեությունն իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների իրականացումն է: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Փավստոս Բուզանդի փողոց, շենք 15, տարածք 24,25:

Ընկերության հավասար մասնաբաժինով ձայնի իրավունքի տրվող բաժնետոմսերի սեփականատերերն են Արամ Կայֆաջյանը՝ 49%, «Ար Ար Էս Ջի Ինկ» ընկերությունը՝ 9.99%, Սթիվեն Պոլյակը՝ 14,01%, Գևորգ Պատվականյանը՝ 9%, Արման Մելքոնյանը՝ 9%, Սամվել Սահակյանը՝ 9%:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 15-ում:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Արցախի Հանրապետությունում պատերազմը և վիճարկելի տարածքների շուրջ ընթացող քաղաքական զարգացումները զգալի ազդեցություն են ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Ներկայիս փուլը կարելի է բնութագրել որպես կայուն վերականգնման ժամանակաշրջան:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ղեկավարության գնահատականը Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների՝ ներառյալ Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտները (ՖՀՄՍ), Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունները (հավաքականորեն՝ ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ), պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 16-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ներ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական գործիքների:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը 2023 թվականի մայիսի 30-ից իր տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտներն ու փոփոխությունները

- *Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*
- *Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ* Գործնական Հայտարարության 2 փոփոխություն)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ)

Հրապարակված ՖՀՄՍ-ներ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների որոշակի փոփոխությունները, որոնք պարտադիր չեն 2023 թվականի դեկտեմբերի 31-ի հաշվետու ժամանակաշրջանների համար Ընկերության կողմից վաղաժամկետ չեն ընդունվել: Ակնկալվում է, որ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա ընթացիկ կամ ապագա հաշվետու ժամանակաշրջաններում:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև՝

- *ֆինանսական ակտիվների դասակարգում.* այն բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակներում պահվում են ակտիվները և պայմանագրային դրույթների գնահատումը, որոշելու համար, թե արդյո՞ք որոշակի ամսաթվերին առաջացող դրամական միջոցների

հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 16;

- *Ֆինանսական գործիքների արժեզրկում.* գնահատում, թե արդյո՞ք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, միևնույն պարտքային ռիսկի բնութագիր ունեցող ակտիվների խմբավորումը, սպասվելիք պարտքային վնասի գնահատումը՝ այդ թվում ապագայի կանխատեսմանը վերաբերող տեղեկատվության օգտագործմամբ;
- *Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ*
  Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1 - Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);*
- *Մակարդակ 2 - Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;*
- *Մակարդակ 3 - Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:
Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Ֆինանսական հաստատություններից, կազմակերպություններից և անհատներից ստացվելիք գումարներ,
- Դրամական միջոցներ,
- Ավանդներ,
- Ներդրումային արժեթղթեր,
- Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ,
- Ստացված փոխառություններ,
- Վարձակալության գծով պարտավորություն

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2023թ.
	հազ. դրամ
Տրամադրված վարկեր	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	-
Դրամական միջոցներ	38,230
Ներդրումային արժեթղթեր	-
	38,230

Իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2023թ.
	հազ. դրամ
Ներդրումային արժեթղթեր	570,412
	570,412

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ 2023թ. հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող 2023թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ	38,230	-
Ֆինանսական հաստատություններից, կազմակերպություններից և անհատներից ստացվելիք գումարներ	14,242	-
Ներդրումային արժեթղթեր	-	570,412
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**52,472**	**570,412**

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող 2023թ. հազ. դրամ
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	282,817
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**282,817**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, Ֆինանսական հաստատություններից, կազմակերպություններից և անհատներից ստացվելիք գումարները, ավանդները, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերը, տրված և ստացված փոխառությունները, ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարները և վարձակալության գծով պարտավորությունները, որոնց հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 16-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:
Պարտքային ռիսկը հիմնականում կապված է արժեթղթերի և արտարժույթի առք ու վաճառքի գծով գործառնությունների հետ, և ներդրումային գործունեությանը, որոնք ներդրումային արժեթղթեր են ավելացնում Ընկերության ակտիվների պորտֆելում:

Ընկերության հիմնական գործունեությունը հանդիսանում է արժեթղթերի և արտարժույթի առք ու վաճառքը: Զգալի ֆինանսական կորուստներից խուսափելու համար Ընկերությունն օգտագործում է պարտքային ռիսկերը որոշելու և արդյունավետ կառավարելու տարբեր մեթոդներ:
Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները լավագույնս ներկայացնում են դրանց հետ կապված պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը:

Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ Տես հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 17.8 կետում:

Պարտքային ռիսկի նշանակալի աճ

Որոշելու համար, թե արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտազանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Ընկերությունը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի, և ապագայամետ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Ընկերությունն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ.

- քանակական թեստ՝ հիմք ընդունելով պարտազանցման հավանականության փոփոխությունը, որը գնահատվել է ելնելով «S&P» and « Moody's» վարկանիշային գործակալությունների վարկանիշների միգրացիայի մատրիցներից,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ տրված փոխառությունների համար և 5-օրյա սահմանափակիչ այլ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների համար:

Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակներ

Ընկերությունը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական ակտիվին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ տարբեր տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են պարտազանցման ռիսկը կանխատեսելու համար: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին և համընկնում են «S&P» and «Moody's» վարկանիշային գործակալությունների կողմից հրապարակված վարկանշավորման մակարդակներին: Այս գործոնները տարբեր են՝ կախված պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի բնույթից և փոխառուի տեսակից:

Պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք ստանում է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ սկզբնական ճանաչման պահին՝ փոխառուի վերաբերյալ առկա տեղեկատվության հիման վրա: Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով հսկվում են, որի արդյունքում գործիքի պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակը կարող է փոփոխվել:

Հսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

- Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս ղեկավար անձնակազմի փոփոխությունները,
- Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը,
- Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը
- Փոխառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները:

Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս:

Ընկերությունը հավաքում է պարտքային ռիսկին ենթարկվող իր ֆինանսական գործիքների կատարողականի և պարտազանցման վերաբերյալ տեղեկատվություն, որը վերլուծվում է ըստ ծառայության և փոխառուի տեսակի, ինչպես նաև ըստ պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակի: Ընկերությունը սահմանում է պարտազանցման հավանականության նվազագույն չափը, որը հավասար է այն երկրի վարկանշավորման մակարդակին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում փոխառուն: Պետական պարտատոմսերի գծով պարտազանցման հավանականության չափը համապատասխանում է երկրի վարկանշավորման մակարդակին:

Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր:
Պարտքային ռիսկի աճի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և փոխառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը:

Որպես ընդհանուր ցուցանիշ համարվում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, եթե Ընկերության մոդելավորման քանակական և որակական մեթոդների հիման վրա որոշվում է հետևյալը.

- Փոխառուի պարտքային ռիսկի մակարդակը վատթարացել է 2 նիշով սկզբնական ճանաչումից ի վեր:
- Փոխառուն ունի ավելի քան 30 օր ժամկետանց պարտավորություն փոխառությունների գծով և 5-օրյա ժամկետանց պարտավորություն այլ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:
- Փոխառության պայմանների վերանայում փոխառուի անվճարունակության պատճառով, որը չի հանգեցնում պարտազանցման:
- Ղեկավարության հայեցողությունը, որը հիմնված է ստանդարտ մշտադիտարկման գործընթացի ընթացքում և այլ աղբյուրներից հաճախորդի վերաբերյալ ստացված որակական տեղեկատվության վրա (մասնավորապես, ընդգրկվածություն հատուկ հսկողության ներքո գտնվող ցանկում, ֆինանսական գործունեության հետ կապված անբարենպաստ մակրոտնտեսական գործոններ և

այլն):

Ընկերությունը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ակտիվի ավելի քան 30 օր ժամկետանցությունը փոխառությունների դեպքում և 5 օր ժամկետանցությունը այլ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների դեպքում: Ժամկետանց օրերի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել փոխառուին:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի նշանակալի աճ ի համեմատություն սկզբնական ճանաչման, գործիքի գծով կորստի պահուստը կրկին չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով:

Ընկերությունը վերահսկում է պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար կիրառվող չափանիշների արդյունավետությունը կանոնավոր ստուգումների միջոցով՝ հավաստիանալու համար, որ.

- չափանիշները հնարավորություն են տալիս որոշելու պարտքային ռիսկի նշանակալի աճը նախքան պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքի գծով պարտազանցումը,
- չափանիշները չեն համապատասխանում ժամանակի այն պահին, երբ ակտիվը դառնում են ավելի քան 30 օր ժամկետանց,
- պարտքային ռիսկի նշանակալի աճ և պարտազանցում հայտնաբերելու միջև միջին ժամկետը ողջամիտ է համարվում,
- պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները որպես կանոն ուղղակիորեն չեն փոխանցվում այն պորտֆելից, որի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին չափով, պարտքային առումով արժեզրկված ֆինանսական գործիքների պորտֆել և
- չի դիտվում կորստի պահուստի չհիմնավորված փոփոխականություն, երբ պորտֆելից, որի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին չափով (1-ին փուլ), գործիքը փոխանցվում է պորտֆել, որի գծով պահուստը չափվում է ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում (2-րդ փուլ):

Պարտազանցման սահմանում

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի Ընկերության նկատմամբ ստանձնած իր պարտավորությունները, եթե Ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),
- Ընկերության նկատմամբ փոխառուի նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է, կամ
- հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն փոխառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու փոխառուի անկարողության պատճառով:

Փոխառուի հետ կապված պարտազանցման տեղի ունենալը գնահատելիս՝ Ընկերությունը դիտարկում է հետևյալը՝

- որակական ցուցանիշները, օրինակ՝ կովենանտների խախտումը,
- քանակական ցուցանիշները, օրինակ՝ նույն թողարկողի կողմից Ընկերության նկատմամբ այլ պարտավորության ժամկետանց կարգավիճակը և չկատարումը և
- Ընկերության ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

Ապագայամետ տեղեկատվության ներառում

Ղեկավարության գնահատմամբ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու ազդեցությունն էական չէ:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտազանցման հավանականությունը,
- կորուստը պարտազանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտազանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12- ամսյա պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Պարտազանցման հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Ընկերությունը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատում է հիմք ընդունելով «S&P» and «Moody's» վարկանիշային գործակալությունների կողմից հրապարակված տեղեկատվությունը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտազանցման դեպքում: Ընկերությունը պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտազանցման պահին: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է ֆինանսական երաշխավորության կատարման պահին վճարման ենթակա գումարը:

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտազանցման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Ընկերությունն ակնկալվող պարտքային կորուստները չափում է հաշվի առնելով պարտազանցման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ փոխառուի երկարաձգման բոլոր հնարավորությունները), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Ընկերությունը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար: Առավելագույն պայմանագրային

ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Ընկերությունն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել երաշխավորությունը:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:
Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների զծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են գործադիր տնօրենի կողմից:

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2023թ. միջին արդյունավետ տոկոսադրույք, % ՀՀ դրամ
Տոկոսակիր ակտիվներ	
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	9.25-9.6%
Տոկոսակիր պարտավորություններ	
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	10%

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանության դեպքում:

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների մարման

ժամկետների ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:
Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով:

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
	հազ. դրամ	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ	38,230	-	-	-	-	38,230
Բանկային ավանդներ	-	-	-	-	-	-
Ֆինանսական հաստատություններից, կազմակերպություններից և անհատներից ստացվելիք գումարներ,	14,242	-	-	-	-	14,242
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	305,681	18,987	245,744	-	570,412
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	2,040	2,040
Հիմնական միջոցներ	-	-	-	-	4,086	4,086
Այլ ակտիվներ	-	-	-	-	6,235	6,235
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	**52,472**	**305,681**	**18,987**	**245,744**	**12,361**	**635,245**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(282,817)	-	-	-	-	(282,817)
Հարկային պարտավորություններ	(3,709)	-	-	-	-	(3,709)
Այլ պարտավորություններ	(7,114)	-	-	-	-	(7,114)
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**(293,640)**	**-**	**-**	**-**	**-**	**(293,640)**
Զուտ դիրքը	**(241,168)**	**305,681**	**18,987**	**245,744**	**12,361**	**341,605**

Ընկերությունը գտնում է, որ բացասական իրացվելի դիրքը կառավարելի է հետգնման պայմանագրերի վերակնքման միջոցով, քանի որ վերջիններս ապահովված են բարձր իրացվելի ֆինանսական գործիքներով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պարտքային արժեթղթերի վաճառքով միջոցով:

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և մասնակիցների շահույթը:
Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

5. Զուտ տոկոսային եկամուտ

	2023թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	
Իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,939
Այլ	127
Ընդամենը տոկոսային եկամուտ	**9,066**
Տոկոսային ծախս	
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(4,938)
Ընդամենը տոկոսային ծախս	**(4,938)**
Զուտ տոկոսային եկամուտ	**4,128**

6. Արտարժույթի վաճառքից զուտ օգուտ

	2023թ. հազ. դրամ
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտներ	23,142
Արտարժույթի առք ու վաճառքից առաջացած կորուստներ	(8,336)
Զուտ օգուտ արտարժույթի վաճառքից և փոխարժեքային տարբերությունից	**14,806**

7. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2023թ. հազ. դրամ
Կոմունալ ծառայություններ և վարձակալություն	13,242
Մասնագիտական ծառայություններ	16,951
Մաշվածություն	2,424
Անվտանգության ծառայություն	57
Այլ	5,820
Ընդամենը	**38,494**

8. Շահութահարկի գծով ծախսեր

	2023թ. հազ. դրամ
Հետաձգված հարկի գծով եկամուտ	2,040
Ընդամենը	**2,040**

2023թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 18%:

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2023թ. հազ. դրամ	
Վնաս մինչև հարկումը	(11,435)	*%*
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	2,058	(18.00)%
Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտներ)	(18)	0.16%
Շահութահարկի գծով եկամուտ	2,040	(17.84)%

Հետաձգված հարկային ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

	Ակտիվներ	Պարտավորություններ	Զուտ	Հաշվառված շահույթի կամ վնասի հաշվին
	2023թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հարկային վնաս	962	-	962	962
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	165	-	165	165
Պահուստներ	913	-	913	913
Զուտ հարկային ակտիվներ	**2,040**	**-**	**2,040**	**2,040**

9. Դրամական միջոցներ

	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ բանկում	38,230
Ընդամենը	**38,230**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

10. Ներդրումային արժեթղթեր

	2023թ. հազ. դրամ
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	570,412
Ընդամենը	**570,412**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

	2023թ. հազ. դրամ
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	
Պետական արժեթղթեր	324,668
Ընդամենը	**324,668**

Ներդրումային արժեթղթերը ժամկետանց չեն:

11. Հիմնական միջոցներ

	Համակարգչային տեխնոլոգիա	Գրասենյակային գույք և այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական արժեք			
Ավելացումներ	5,305	925	6,230
Մնացորդը առ 31.12.2023 թ.	**5,305**	**925**	**6,230**
Կուտակված մաշվածություն			
Ժամանակահատվածի ծախս	2,276	127	2,403
Մնացորդը առ 31.12.2023 թ.	**2,276**	**127**	**2,403**
Զուտ հաշվեկշռային արժեք	**3,029**	**798**	**3,827**

Ոչ նյութական ակտիվներ

	2023թ. հազ. դրամ
Սկզբնական արժեք	280
Ավելացումներ	**280**
Մնացորդը առ 31.12.2023 թ.	
Կուտակված մաշվածություն	
Ժամանակահատվածի ծախս	21
Մնացորդը առ 31.12.2023 թ.	**21**
Զուտ հաշվեկշռային արժեք	**259**

12. Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ

	2023թ. հազ. դրամ
Բանկերից ստացված վարկային գիծ	282,507
Բանկերից ստացված վարկային գծի դիմաց հաշվեգրված գումարներ	310
Ընդամենը	**282,817**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունի պայմանագրային կողմ հանդիսացող 2 բանկ, որոնց գծով պարտավորության մնացորդները գերազանցում են Ընկերության սեփական կապիտալի 10%-ը:

13. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմել է 351,000 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 3,510,000 սովորական բաժնետոմսից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100 դրամ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Գլխավոր պահուստ

Օրենսդրության պահանջների և Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերությունն իր չբաշխված շահույթից պետք է ստեղծի բաշխման ոչ ենթակա նվազագույն պահուստ՝ բաժնետիրական կապիտալի 15%-ին հավասար գումարի չափով՝ ապագա վնասները ծածկելու համար:

14. Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ մարդկանց առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ մարդկանց առողջության հասցված վնասը, որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկային պարտավորվածություններ

ՀՀ հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Շրջակա միջավայրի պահպանություն

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը խստացնում է բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրությունը, և դրա պահանջների ապահովման վերաբերյալ ՀՀ պետական մարմինների դիրքորոշումը շարունակաբար փոփոխվում է: Ընկերությունը պարբերաբար գնահատում է իր պարտավորությունները բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն: Պարտավորությունները բացահայտվելուն պես ճանաչվում են: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են ծագել գործող կանոնակարգերի, քաղաքացիական իրավական համակարգի կամ օրենսդրության փոփոխման հետևանքով, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի արդյունքում, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Ղեկավարությունը կարծում է, որ գործող

բնապահպանական օրենսդրության ընթացիկ կիրառման պայմաններում չկան շրջակա միջավայրին վնաս հասցնելու հետևանքով առաջացած նշանակալի պարտավորություններ:

15. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությա+ն առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է գործադիր տնօրենին, ֆինանսական տնօրենին:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

	2023թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	20,300
Ընդամենը	**20,300**

16. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Իրական արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև բնականոն գործարքի ընթացքում, բացառությամբ հարկադիր վաճառքի կամ լուծարման դեպքերի, և որի լավագույն վկայությունն է ակտիվ շուկայում գնանշվող գինը:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Ֆինանսական հաստատություններից, կազմակերպություններից և անհատներից ստացվելիք գումարներ	14,242	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	570,412	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	282,817	Մակարդակ 2	Կիրառելի չէ

17. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը

17.1 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

17.2 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են երկարաժամկետ վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հաղորդակցության սարքեր, համակարգչային տեխնիկա	- 1 տարի
Տնտեսական գույք, սարքավորումներ	- 8 տարի

17.3 Վարձակալություն

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն վարձակալության սահմանման հիման վրա:

Պայմանագրի սկզբում Ընկերությունը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

Ընկերությունը վարձակալում է անշարժ գույք վարչական նպատակներով:

Ընկերությունը որպես վարձակալ վարձակալության պայմանագրի սկզբնական ճանաչման պահին ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալական պարտավորություն, բացառությամբ ցածրարժեք և կարճաժամկետ վարձակալությունների՝ ՖՀՄՍ 16-ով նախատեսված բացառությունների:

Սկզբնական ճանաչումը

Սկզբնական ճանաչման ամսաթվին Ընկերությունը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբնական արժեքով, որը ներառում է հետևյալ տարրերը.

- վարձակալական պարտավորության սկզբնական ճանաչման արժեքը,
- ճանաչման ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձակալական վճարները, հանած վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանների ազդեցությունը,
- կրած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալած ակտիվի ազատման, վերականգման կամ ապամոնտաժման ծախսերի գնահատականը:

Սկզբնական ճանաչման ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալական պարտավորությունը՝ որպես այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա վարձակալական վճարների ներկա արժեք: Վարձակալական վճարները զեղչվում են վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, եթե այն հնարավոր է որոշել: Հակառակ դեպքում Ընկերությունը զեղչման համար օգտագործում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալը չափում է ակտիվի օգտագործման իրավունքը սկզբանական արժեքով՝

- հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը
- ճշգրտված վարձակալական պարտավորության վերաչափումով:

Ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության հաշվարկի համար հիմք է հանդիսանում հիմնական միջոցների մաշվածության Ընկերությունը քաղաքականությունը: Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը վերաչափում է վարձակալական պարտավորությունը՝

- մեծացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալական պարտավորության նկատմամբ հաշվեգրվող տոկոսը
- փոքրացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարած վարձակալական վճարները
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության պայմանագրի վերաչափումները կամ փոփոխությունները

17.4 Արտարժույթ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով

հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև: Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

17.5 Տոկոսներ

Արդյունավետ տոկոսադրույք

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից տարբեր ֆինանսական գործիքների արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է

ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է: Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 17.8 (դ) կետում:

Ներկայացում

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները ներկայացվում են որպես այլ տոկոսային եկամուտ՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով տոկոսային ծախսը:

17.6 Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես Ծանոթագրություն 17.8):

17.7 Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության

ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

17.8 Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

(ա) Դասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:
Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:
Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմում, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում (տես Ծանոթագրություն 17.8 (բ)), բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:
Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

(բ) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Ընկերությունը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

(գ) Ֆինանսական ակտիվների և Ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Ընկերության կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Ընկերությունն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Ընկերությունը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Ընկերությունն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Ընկերությունը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:
Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Ընկերությունը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն, փոխարկման

հնարավորության ներառում:
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

(դ) Արժեզրկում

Տես նաև Ծանոթագրություն 4:

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար՝

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Ընկերությունը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես Ծանոթագրություն 4):

Ընկերությունը համարում է, որ պարտքային ներդրումային արժեթուղթն ունի ցածր պարտքային ռիսկ, եթե վերջինիս վարկանիշը համարժեք է միջազգայնորեն ընդունված «ներդրումային մակարդակ» սահմանմանը:

12- ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժակետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք վճարվեն տիրապետողին պարտքային կորուստը հատուցելու համար՝ հանած այն գումարները, որոնք Ընկերությունն ակնկալում է հետ ստանալ:

Տես նաև Ծանոթագրություն 4:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես Ծանոթագրություն 17.8 (գ)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես Ծանոթագրություն 4):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական

ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,

Ընկերության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի

- Հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ վերջին վեց ամիսների ընթացքում: Բացի այդ, անհատներին տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը: Բացի այդ, պարտքային առումով արժեզրկված են համարվում 30 կամ ավելի օր ժամկետանց վարկը, 5 կամ ավելի օր ժամկետանց ներդրումային արժեթղթերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը:

Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրերը՝ սովորաբար որպես պահուստ:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:
Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել պարտքերի գանձման այլ միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

17.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

17.10 Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ

Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով (Ծանոթագրություն 17 (17.8)): Այս փոխառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

17.11 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 17.8 (ա)): Այս արժեղթերը սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը (տես Ծանոթագրություն 17.8 (ա)): Այս արժեթղթերը չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

18. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշգրտման կամ լրացուցիչ բացահայտման: